ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բարձրագույն դատական խորհրդում ստացվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահի գրությունը, որով վերջինս խնդրել է քննարկել Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան **<u>քաղաքացիական մասնագիտացման</u>** դատավոր գործուղելու հարցը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 56-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *այն դեպքում, երբ որևէ դատարանի բնականոն գործունեությունը չի կարող ապահովվել դատավորների թվի օբյեկտիվորեն առաջացած անբավարարության հետևանքով, Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ նույն ատյանի համապատասխան մասնագիտացման մեկ այլ դատավոր իր համաձայնությամբ կարող է մինչև մեկ տարի ժամկետով գործուղվել առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: Նշված ժամկետը կարող է երկարաձգվել միայն մինչև դատավորի վարույթում գտնվող գործի քննության ավարտը: Նույն դատավորը չի կարող կրկին գործուղվել նախորդ գործուղման ավարտից հետո՝ մեկ տարվա ընթացքում:*

Բարձրագույն դատական խորհրդի 2020 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ ԲԴԽ-68-Ն-15 որոշման 154-րդ կետի համաձայն՝ *մինչև հարցի քննարկումը Խորհրդին ներկայացնելը Դեպարտամենտի կենտրոնական մարմինը աշխատակազմերի, ինչպես նաև դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելու միջոցով տեղեկացնում է դատավորներին գործուղման հնարավորության մասին:*

Ելնելով վերոգրյալից՝ **ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների** (բացառությամբ՝ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի) **քաղաքացիական մասնագիտացման դատավորներին տեղեկացվում է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (նստավայրը՝ Արմավիր քաղաք) գործուղվելու հնարավորության մասին:**

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան գործուղվելու ցանկություն ունեցող դատավորները կարող են մինչև **<u>2021 թվականի ապրիլի 2-ը, ժամը՝ 18:00-ն</u>,** գործուղվելու առնչությամբ իրենց գրավոր համաձայնությունը ներկայացնել Բարձրագույն դատական խորհուրդ (էլ. փոստ՝ info@court.am):